

ԼԱՐԻՍԱ ՆԻԿՈԼԱՅԻ ՊՈԼՈՒԲՈՅԱՐԻՆՈՎԱ

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի արտասահմանյան
գրականության պատմության ամբիոնի վարիչ*

I.poluboyarinova@spbu.ru

Scopus Author ID: 57219297260

ԼՈՒԻՋԱ ԱՐԵԳԻ ԳԱՍՊԱՐՅԱՆ

*Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի
գիտաշխատող, Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի
արտասահմանյան գրականության պատմության ամբիոնի
դոկտորանտ*

luisa.gasparyan83@gmail.com

ORCID ID: 0000-0002-6023-2861

DOI: 10.54503/978-5-8080-1557-9-198

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏՐԱՎՄԱՅԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՎԻՐՋԻՆԻԱ ՎՈՒԼՖԻ «ՄԻՍԻՍ ԴԵԼՈՈՒԵՅ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ)

*Բանալի բառեր՝ Վիրջինիա Վուլֆ, Հայկական հարց, հայեր, մոդեռնիզմ,
հեղափոխությունների տրամա, գիտակցության հոսք, բրիտանական մամուլ:*

Ներածություն

«Գիտակցության հոսքի» մեխանիզմի քննությունը գրականագիտական մեթոդաբանության գործիքակազմով սահմանափակելը վիճելի հարց է: Այս հասկացության համակողմանի ուսումնասիրության համար անհրաժեշտ է ընդլայնել վերլուծության տիրույթը և ընդգրկել միջգիտակարգայության գործընթացը:

Ինչ խոսք, մոդեռնիստ հեղինակները իրենց ստեղծագործություններում հենվում են մարդկային գիտակցության «նախախոսքային» մակարդակների արտացոլման վրա՝ նպատակ ունենալով առաջին հերթին բացահայտել կերպարների հոգեբանական, հուզական կողմը:

միջոց, որը մինչ այդ գրեթե կիրառված չէր: «Գիտակցության հոսքը» կիրառվել է Զեյմա Զոյսի, Մարսել Պրուստի և այլ հեղինակների կողմից, բայց մեր ուշադրության առանցքում Վիրջինիա Վուլֆի (1882–1941) «Միսիս Դելոուելյ» (1925) ստեղծագործությունն է՝ հայերին վերաբերող հետաքրքրաշարժ և բազմաթիվ հարցադրումներով դրվագով:

Վիրջինիա Վուլֆի ստեղծագործությունները, կարելի է ասել ստեղծում են «անցումային բնական կամուրջ» ուշ վիկտորիանական դարաշրջանի և մոդեռնիզմի միջև: Հնարավոր է, որ դա պայմանավորված է մի քանի առանցքային հանգամանքներով. ա/ Վուլֆը դաստիարակվել էր ավանդական վիկտորիանական արժեքներով և, անշուշտ, դա չէր կարող ներհակ ձևով չարտացոլվել իր գրական կյանքում,

բ/ Վուլֆը ռուս գրականության մեծ սիրահար էր. Դոստոևսկին, Զեյսովը, Տոլստոյը, Տուրգենևը Վուլֆի համար բացեցին նոր գրական հորիզոններ՝ ուղղորդելով գտնել նոր մոտեցումներ և լուծումներ, որոնք կարտացոլեն մարդու հոգեբանական կողմը, մարդկային էության գաղտնիքները, որոնք նախկինում մակերեսային էին ներկայացված բրիտանական գրականության մեջ:

Վուլֆը հրաժարվում է վիկտորիանական դարաշրջանի ավանդական ռեալիզմից, որին հավատարիմ են եղել Զարլզ Դիքենսը և Ուիլյամ Թեքերեյը՝ հոգուտ գրական իմպրեսիոնիզմի, որում հերոսները արտացոլում էին օբյեկտիվ իրականությունը՝ համաձայն զգացական ընկալման,

գ/ համաշխարհային պատերազմը և հետպատերազմյան տրավման կամ ընկճախտը (դեպրեսիան) ցնցեց ամբողջ աշխարհը, և այստեղ անմասն չէր մնացել հենց Վուլֆը: Նա տառապում էր խոր դեպրեսիայով, հոգեկան ծանր տառապանքների մեջ էր, այդ հանգամանքը մեծ ազդեցություն ունեցավ նրա վեպերի կերպարակերտման հարցում: Եթե մինչ համաշխարհային պատերազմը բրիտանական գրականությունը (ինչու ոչ, նաև համաշխարհային գրականությունն ընդհանուր առմամբ) արտացոլում էր անհատի հոգեբանական շեղումները տեղային, սոցիալական և կենցաղային մակարդակում (հարբեցողություն, խաղամոլություն, հանցագործության հետևանքով հոգեկան խանգարում կամ ժառանգական նախատրամադրվածությունից բխող իրավիճակներ, մանկական հասակում ինչ-ինչ տրավմատիկ պահեր և այլն՝ այսպիսով կարծես թե հետին պլան մղելով հոգեբուժության և հոգեվերլուծության

ոլորտի կարևորությունը), ապա մոդեռնիզմը բավականին լուրջ անցումային դարաշրջան էր նաև կերպարի հոգեկան աշխարհի նկարագրման հարցում: Մանավանդ որ արդեն մշակութային այլ ոլորտներում զարգանում էին իմպրեսիոնիզմի, կուբիզմի ուղղությունները, իսկ հոգեվերլուծության ասպարեզում մեծ առաջխաղացում էր արձանագծել Ֆրոյդի, Բեխտերևի և այլ հեղինակների աշխատությունների լույսի ներքո: Հանուն արդարության անհրաժեշտ է ընդգծել, որ Դիքենսը արդեն իր գրական կյանքի վերջին տասնամյակներում այցելում էր հոգեբուժարաններ, ուսումնասիրում հոգեկան խանգարում ունեցող մարդկանց վարքը, հիվանդության կլինիկան և պատկերավոր ձևով ներկայացնում իր փոքր կտավներում կամ նորթերում, որոնցից մեկն է «Արբեցողի մահը»: Վերջինս երկու անգամ թարգմանվել է հայերեն Թիֆլիսում (1885թ. և 1886թ. հրատարակություններ):

Գրականագետ Կոհնը¹, հիմք ընդունելով Լորենս Սթերնի տեսության որոշ դրույթներ, առաջարկում է տեքստի վերլուծության «պարույրաձև» մոդելը, ըստ որի՝ գեղարվեստական գրականության հիմքերը պարբերաբար տատանվում են արտաքին ազդեցության գործոնների (նաև հոգեբանական ազդեցությունների) և ներքին ազդեցության գործոնների միջև՝ կախված դարաշրջանի պահանջներից՝ այսպիսով մերժելով սոսկ գծային ուղղությունը²:

...ոչինչ չէր զգում ալբանացիների հանդեպ, թե՛ հայերի...

Վիրջինիա Վուլֆի «Միսիս Դելոուելյ» վեպի առանցքում հերոսների կյանքի մեկ օրն է: Սյուժեն զարգանում է երբևիցե իրար հետ չառնչված երկու անձերի շուրջ. մի կողմից Քլարիսա Դելոուելյը՝ բարձրաշխարհիկ տանտիկին, ով փորձում է կատարելության հասցնել իր առօրյա-կենցաղային, սոցիալական պարտականությունները, նաև բարձր մակարդակով կազմակերպել տարատեսակ երեկույթներ: 1923 թվականի հունիսյան այդ օրը նա զբաղված էր երեկույթի կազմակերպմամբ: Մյուս կողմից՝ Սեփթիմուս Ուորրեն Սմիթը, որը ժամանակին կամավորագրվել էր պատերազմին, ականատես եղել ահասարսուռ տեսարանների. նրա աչքերի առաջ մահանացել էր ընկերը: Նա տառա-

¹ **Cohn D.**, Transparent Minds: Narrative Modes for Presenting Consciousness in Fiction, Princeton: Princeton University Press, 1978, 170.

² Նույն տեղում, էջ 7:

պում է հետպատերազմյան խոր դեպրեսիայով, հոգեբանական ծանր տառապանքների մեջ է, վիրավոր թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես: Սկզբում Սեփթիմուսը ռոմանտիզացնում էր պատերազմին իր մասնակցությունը, քանի որ իր պարտքն էր համարել պաշտպանել Անգլիան՝ Ռիլյամ Շեքսպիրի և միսս Իզաբել Փոլի երկիրը (դասախոս, ում Սեփթիմուսը սիրահարված էր եղել): «Միսիս Դելուուեյ»³ վեպում հատկապես Սեփթիմուս Սմիթի կերպարով է Վուլֆը նկարագրել հետպատերազմյան հոգեբանական տրավման: Փաստորեն, հետպատերազմյան հոգեվիճակի արտացոլումը գեղարվեստական գրականության մեջ մեկնաբանվեց նորովի՝ կիրառության մեջ դնելով «գիտակցության հոսքի» տեխնիկան, որի պրիզմայի միջոցով ընթերցողը խորասուզվում և վերապրում է հերոսի հոգեկան աշխարհի, նաև հոգեկան հիվանդությունների կլինիկական ախտանիշները, որոնց արտացոլումը կամ քննությունը մինչ այդ մարգինալացված, սահմանային էին:

Թվում է, թե Վուլֆի «գիտակցության հոսքի» մեխանիզմը քառասային բնույթ կարող է ունենալ, սակայն դրան բնորոշ է համակարգվածությունը, խորությունը, ժամանակային-տարածական տիրույթին համահունչ լինելը: Գրականագետների կարծիքով հեղինակի հիմնական նպատակն է արտացոլել հերոսների հոգեսոմատիկ վիճակը, այլ ոչ թե՛ բուն սյուժեն⁴:

Ուստի, դրամատիկ իրադարձությունների և ավանդական կարծրատիպային կերպարների փոխարեն Վուլֆը պատկերում է մարդու հոգեկանը աշխարհը: Կառուցվածքային առումով նման վեպերը «Ժամանակի» հստակ ընդգծվածություն չունեն, քանի որ հերոսի ապրած մեկ օրն էլ կարող է արտացոլել նրա ողջ կյանքի «ոդիսականը»: Ժամանակային-տարածական առումով վեպը ներկայացնում է հետահայացություն (retrospection). այն հերոսների կյանքի անցած ուղու և ընթացիկ ներկա պահի տպավորությունների ամբողջություն է: Դարաշրջանի հոգեբանական (նույնիսկ կարելի է ասել հոգեվերլուծական) ռեալիզմը,

³ **Goldman J.**, The Cambridge Introduction to Virginia Woolf. New York: Cambridge UP, 2006, 118 p.

⁴ **Naremore, J.**, 'Virginia Woolf and the Stream of Consciousness', in The World Without a Self. Virginia Woolf and the Novel, London: Yale University Press, 1973, pp. 60–150.

որտեղ հատուկ ուշադրություն է դարձվում «գիտակցության հոսքին», ուղղված է ստեղծագործության ճանաչողական հայեցակարգի ներկայացմանը, Սեփթիմուսի՝ պատերազմից հետո վնասված հոգեկան աշխարհի և նրա կերպարի պարադիգմայի միջոցով բացահայտելու դարաշրջանի հասարակական, պատմական և հոգեբանական կառուցվածքը: Վուլֆը ներկայացնում է երկու մակարդակի սոցիում՝ Քլարիսան (բարձրաշխարհիկ տիկին), որին քիչ էր հետաքրքրում ընթացիկ աշխարհակարգը և Սեփթիմուսը՝ հասարակ գինվոր, որն անցել էր պատերազմի թոհուրոհի միջով և օգնության կարիք ուներ ու թերևս չի էլ ստանում: Այս երկու կերպարները առնչվում են միայն մեկ դրվագում, երբ Սեփթիմուսը ինքնասպան է լինում Քլարիսայի խնջույքի օրը, և Քլարիսայի հյուրերից մեկը՝ Սեփթիմուսի հոգեբույժը հայտնում է այդ լուրը: Եթե Սեփթիմուսի կերպարի լույսի ներքո Վուլֆը ուղղակիորեն ներկայացնում է հետպատերազմյան տրավման (ընդ որում ընդգծվում է, որ ընկերոջ մահից հետո Սեփթիմուսը կարծես թե կարողանում է հաղթահարել այդ տրավման, սակայն դա ընդամենը թվացյալ էր. հույզերը որոշ ժամանակ հետ էին քաշվել ենթագիտակցական մակարդակ, այնուհետև առաջացրել լուրջ հոգեկան խանգարումներ), ապա Քլարիսայի կերպարի նկարագրության պարագայում աշխարհաքաղաքական անցուդարձը քիչ է ներկայացվում: Այդուհանդերձ, մեկ դրվագի ներմուծումով Վուլֆը բացահայտում է աշխարհակարգի իրողությունները: Այս առումով մեծ հետաքրքրություն է առաջացնում հայերին վերաբերող հատվածը Քլարիսա Դելուելյի գիտակցության հոսքի միջոցով:

*How like him! He would go on saying "An hour's complete rest after luncheon" to the end of time, because a doctor had ordered it once. It was like him to take what doctors said literally; part of his adorable, divine simplicity, which no one had to the same extent; which made him go and do the thing while she and Peter frittered their time away bickering. He was already halfway to the House of Commons, **to his Armenians, his Albanians, having** settled her on the sofa, looking at his roses. And people would say, "Clarissa Dalloway is spoilt." She cared much more for her roses than for the Armenians. Hunted out of existence, maimed, frozen, the victims of cruelty and injustice (she had heard Richard say so over and over again) – no, **she could feel nothing for the Albanians, or was it the***

Armenians? but she loved her roses (didn't that help the Armenians?) – the only flowers she could bear to see cut⁵.

Հայերեն թարգմանությունը կատարված Վահե Արսենի կողմից, 2021 թ., ներկայացվում է հետևյալ կերպ.

Հիմա նա արդեն կես ճանապարհին էր դեպի Համայնքների պալատ, դեպի **իր հայերը, իր ալբանացիները՝** իրեն թողնելով բազմոցին, ծաղիկներին դեմ հանդիման: Ու մարդիկ կասեն. «Քլարիսա Դելուելը եսասերի մեկն է»: Նրան ավելի շատ իր վարդերն են մտածում, քան հայերը: Բնաջնջումից մազապուրծ, հաշմված, ցրտահար, զոհեր վայրագությունների ու անարդարության (հազար ու մի անգամ Ռիչլորդը լսել էր դրա մասին) – **ո՛չ, ինքը ոչինչ չէր զգում ալբանացիների հանդեպ, թե՛ հայերի, բայց ինքը սիրում էր իր վարդերը (դա կոգնե՛ր հայերին)** – միակ ծաղիկը, որ իր աչքին հաճո էր կտրված վիճակում⁶:

Վուլֆի անդրադարձը հայերին և Հայկական հարցին կարելի է մեկնաբանել մի քանի դիտանկյունից. նախ՝ ո՞րն է պատճառը, որ հայերի ցեղասպանությունից հետո հեղինակը դրան անդրադարձ կատարեց միայն գրեթե տասնամյակ հետո (1925թ.): Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, այնուամենայնիվ, չբերեց «բավարար հանդարտություն» համաշխարհային թատերաբեմում, քանի որ աշխարհաքաղաքական և բարոյական հարցադրումները չէին ստացել իրենց «հարաբերականորեն արդար» և հավասարակշիռ լուծումը, ուստի երկու տասնամյակ հետո այդ չլուծված հարցադրումները նոր թափ ստացան, և սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը: Ապա հայոց ցեղասպանության անպատժելիության և Հայկական հարցի նկատմամբ հետաքրքրությունը, թեև բավականին ուշ, բայց անուղղակիորեն է ներկայացվում Վուլֆի կողմից: Բանն այն է, որ արդեն շատ ազգեր զգացին այդ անպատժելիության հետևանքները իրենց վրա և մինչև այսօր էլ շարունակում են զգալ: Վուլֆի ամուսին Լեոնարդ Վուլֆը հրեա էր, հենց այդ ժամանակաշրջանում էր ձևավորվում հակասեմիտական առաջին ալիքը եվրոպական երկրներում, ավելին, Վուլֆը հետագայում տպագրում է *Three Guinea* (1938) աշխատությունը, որտեղ քննադա-

⁵ Woolf V., *Mrs Dalloway*, London: Vintage Classic Library, 2000, p. 106.

⁶ Վուլֆ Վ., Միսիս Դելուելը/ անգլերենից թարգմանությունը՝ Վահե Արսենի, Երևան, «Չանգակ» հրատ., 2021թ. էջ 152:

տում էր նացիստական ռեժիմը և դրա «բջիջների» տարածում որոշ եվրոպական երկրներում: Եթե խորքային վերլուծության ենթարկենք ներկա իրողությունները, ապա կարող ենք ասել, որ առերեսվում և կրում ենք Առաջին և Երկրորդ աշխարհամարտերից հետո աշխարհաքաղաքական ասպարեզում չլուծված և բավարար պատժելիություն ստացած իրողությունների հետևանքները:

Համաշխարհային պատերազմից հետո բրիտանական մամուլում բավականին լուրջ անդրադարձ արվեց Բրիտանիայի գաղութատիրական նկրտումների և «վայրի» կապիտալիզմի հետևանքներին, ինչպես *English capitalism had done around the world and to the unpalatable and inconvenient truths of British-instigated racial violence*⁷: Այս առումով կարելի է առանձնացնել Վիրջինիա Վուլֆին և իր ամուսնուն՝ Լեոնարդո Վուլֆին պատկանող the Hogarth Press հրատարակչությունը, որտեղ տպագրվում էին սոցիալ-քաղաքական հոդվածներ տարբեր հեղինակների կողմից, ինչպես օրինակ *Empire and Commerce in Africa* (հեղինակ՝ Լեոնարդո Վուլֆ), *The Anatomy of African Misery* (հեղինակ՝ Ռամզի Մաքդոնալդս) և *The People of Ararat* (հեղինակ՝ Բարթ) կամ *Why the World Needs Armenians*, որտեղ ընդգծվում էր, որ ի տարբերություն մյուս ազգերի՝ հայերի դերը տարածաշրջանում առանցքային է. նրանք սահուն կերպով կարողանում էին հաստատուն կապեր զարգացնել և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի հետ տարբեր ոլորտներում՝ գիտություն, արվեստ, առևտուր և այլն:

Բավականին հետաքրքիր է վերոնշյալ հատվածի ռուսերեն թարգմանությունը, որը կատարել է Ելենա Սուրիցը 1984 թվականին:

Как на него похоже! Он будет повторять: «После ленча полный покой в течение часа» до скончания века, потому что один врач однажды это ей предписал. На него похоже – понимать предписания врачей совершенно буквально; это часть его дивной, его божественной простоты, и больше ни у кого нет до такой степени простоты; потому-то он сразу шел и что-то делал, пока они с Питером тратили время в пустых пререканиях. Сейчас он

⁷ Barrows A., Chinese Eyes and Muddled Armenians: The Hogarth Press and British Racial Discourse/ Interdisciplinary/Multidisciplinary Woolf (eds. Ann Martin, Kathryn Holland), 2013, pp. 237–242, p. 238

уже наполнуги к палате общин, спешит к своим армянам, к своим славянам, устроивее на кушетке, лицом к розам. А ведь кто-то скажет: «Кларисса Дэллоуэй – неженка». Да, ей куда больше нравятся ее розы, чем армяне. Гонимые, преследуемые, истязаемые, окоченелые, жертвы жестокости и несправедливости (Ричард сто раз говорил), нет, ей совершенно **безразличны славяне – или армяне? Зато розы ей радуют сердце (ведь и для армян эдак лучше, не правдали?)** – единственные цветы, которые не противно видеть срезанными с куста. А Ричард уже в палате общин; он в своем комитете, и все ее затруднения он тоже уладил⁸.

Ելենա Սուրիցը հատվածը թարգմանել է պատմաքաղաքական մեկ այլ դիտանկյունից՝ *Albanians-ալբանացիներ*⁹ միավորը փոփոխելով *славяне* միավորով, այսպիսով կարծես թե ուղղորդելով ընթերցողին դեպի այն միտքը, որ սլավոնական ազգը Բալկաններում նույնպես հալածվել էր թուրքերի կողմից: Այնուամենայնիվ, պահպանելով դիվանագիտական «աստառը»՝ Վուլֆը համատեքստում չի ընդգծում, թե ում կողմից է հայ ժողովրդը ցեղասպանության ենթարկվել կամ «հալածվել»:

Ներկայացնենք ևս մեկ օրինակ, այսպես՝

*An offering for the sake of offering, perhaps. Anyhow, it was her gift. Nothing else had she of the slightest importance; could not think, write, even play the piano. **She muddled Armenians and Turks;** loved success; hated discomfort; must be liked; talked oceans of nonsense: and to this day, ask her what the Equator was, and she did not know. All the same, that one day should follow another; Wednesday, Thursday, Friday, Saturday; that one should wake up in the morning; see the sky; walk in the park; meet Hugh Whitbread; then suddenly in came Peter; then these roses; it was enough. After that, how unbelievable death was! – that it must*

⁸ Вульф В., Миссис Дэллоуэй /перевод Елены Суриц, М.: изд.-во “АСТ”, 2019, с. 157.

⁹ Համատեքստում ուշադրության է արժանանում *ալբանացիներ*, թե *հայեր* արտահայտությունը, որն, անշուշտ, պատահական չէր կարող հայտվել Վուլֆի համատեքստում: Հավանաբար հայերի և ալբանացիների (ադվանների) հետ զուգահեռ անցկացնելու թեզը արդեն ձևավորվել էր 1920-ականներից սկսած, որն, ի դեպ, լայն շրջանառության մեջ է ներկա ժամանակահատվածում:

end; and no one in the whole world would know how she had loved it all; how, every instant¹⁰.

Հոհաբերություն հանուն զոհաբերության, հավանաբար: Բոլոր դեպքերում դա էր իր շնորհը: Ոչ մի այլ բան իր համար. չէր կարողանում փիլիսոփայել, գրել, անգամ դաշնամուր նվագել: **Իր համար նույնն էին հայերն ու թուրքերը.** սիրում էր փառք, ապրում անհարմարավետությունը, համակրանք պահանջում, ժամերով անհեթեթություններ դուրս տալիս, և այսօր էլ հարցրու իրեն՝ ինչ է հասարակածը, և ինքը չի իմանա¹¹:

Просто, наверное, надо приносить жертвы. Во всяком случае, такой уж у нее дар. Больше ей ничего не дано хоть сколько-то стоящего; она не умеет мыслить, писать, даже на рояле играть не умеет. **Не в силах отличить армяно от турок;** любит успех; ненавидит трудности; любит нравиться; городит горы в здохора; и по сей день – спросите ее, что такое экватор – и она ведь не скажет.¹²

Քրիստոնյա հայերին նույնացնելով սկզբում ալբանացիների, այնուհետև թուրքերի հետ՝ Վուլֆը անուղղակիորեն ներկայացնում է «հավաքական էլիտայի» տեսակետը և նրանց անտարբերությունը 20-րդ դարի սկզբի սոցիալ-քաղաքական, մշակութային, ազգային առանձնահատկությունների վերաբերյալ՝ առաջին պլան մղելով անգլո-սաքսոնյան ինքնագնահատականը և, գուցե նաև իր գերազանցությունը մյուս ժողովրդների նկատմամբ: Եթե Վիրջինիա Վուլֆի ամուսինը մամուլի միջոցով միտված էր արևմուտքում բարձրաձայնել հայ ժողովրդի նկատմամբ գործած հանցագործությունները և, առհասարակ «վայրի» կապիտալիզմի կործանարար հետևանքները, ապա Վուլֆը այդ հարցադրումները անուղղակիորեն արտացոլում էր իր գրականության միջոցով: Տիկին Դալրուեյին (ասել է թե հավաքական բարձր խավի ներկայացուցիչներին) գրեթե չի հետաքրքրում հետպատերազմյան աշխարհի հասարակական և քաղաքական համակարգը, թեև նրան հուզեց Սեփթիմուս Սմիթի ինքնասպանությունը: Սակայն նրան անհանգստացրել է և վրդովեցրել այն փաստը, որ Լեդի Բրուսթոնը չի հրավիրել իրեն ընթերիքի: Մինդեռ Սեպտիմուս Սմիթի կերպարը, որը, լինելով

¹⁰ p. 107–108.

¹¹ Թարգմանիչ՝ Վահե Արսեն, էջ 155

¹² Перевод Е., Суриц, с. 159.

հետպատերազմյան ծանր ընկճախտի (դեպրեսիայի) մեջ, չի կարողանում հաղթահարել այդ տրավման և ինքնասպան է լինում, ներկայացնում է հետպատերազմյան հասարակության, հալածված և ցեղասպանված ազգերի պրոտոտիպ, մասնավորապես, տվյալ հատվածի արտացոլմամբ ցեղասպանություն տեսած և մազապուրծ եղած հայերի վիճակը: Հիրավի, պատմաբանասիրական շատ աշխատություններ, որոնք վերլուծել են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ժողովրդի հետ կատարվածը, համակողմանի անդրադարձ են կատարում նաև նրանց հոգեբանական ծանր վիճակին: Կույումջյանը իր “Archeology of Madness: Komitas, Portrait of an Armenian Icon” աշխատության մեջ ընդգծում է, որ Հայոց ցեղասպանությունն վերապրած հայերը Կոմիտասի երկարատև տառապանքը որակել են որպես իրենց հավաքական ցավի խորհրդանիշ: Լինելով հոգեբույժ՝ Կույումջյանը ինքն էր ցանկանում ուսումնասիրել Կոմիտասի հոգեկան տառապանքների կլինիկական ախտանիշները՝ փորձելով խորքային վերլուծության ենթարկել հոգեբուժարանների արխիվներում պահպանված նյութերը, այնուհետև քննել Պարույր Սևակի «Անլռելի Զանգակատուն»-ը: Այցելելով Փարիզից ոչ հեռու գտնվող Hospital Villejuif հաստատություն, որտեղ Կոմիտասը անց է կացրել շուրջ տասներեք տարի՝ Կույումջյանը արտահայտում է իր հիասթափությունը՝ ընդգծելով, որ իր համար դա *terra incognita* է, քանի որ Կոմիտասի հոգեբանական ախտանիշների մասին գրավոր ոչ մի հստակ տեղեկություն չկար: Այդուհանդերձ, եղած տեղեկությունների հենքի վրա, հոգեբույժը եզրահանգում է, որ Կոմիտասի մոտ հստակ արտահայտված էր Posttraumatic Stress Disorder՝ բառացի հետտրավմատիկ սթրեսային խանգարում, որը պայմանավորված էր ցեղասպանության ահասարսուռ տեսարաններին ականատես լինելով¹³:

Ինչ խոսք, արևմուտքում բարձրաձայնում էին Հայոց հարցը, բայց ո՞ր համատեքստում. խուսափում էին ցեղասպանությունը անվանել ցեղասպանություն, պատասխանատվության ենթարկել կատարողներին և այլն: Օրինակ, National Geographic հայտնի ամսագիրը 1915թ. տպագրել է մի լայնածավալ հոդված հայերի և Հայաստանի մասին

¹³ **Kuyumjian Soulahian R.**, Archeology of Madness: Komitas, Portrait of an Armenian Icon, Princeton, New Jersey, Gomitas Institute, pp. 1–8.

“Armenia and the Armenians”¹⁴. Վերնագրով: Լրագրողը՝ Հեսթեր Դոնալդսոն Ջենքինսը, եղել էր Արևմտյան Հայաստանում 1915 ապրիլին, հողվածը լույս է տեսել հոկտեմբերին՝ ուղեկցվելով լուսանկարներով, որոնք ներկայացնում են հայ ժողովրդի կենցաղային անցուդարձը, օրինակ՝ հայերի բաստուրմա պատրաստելը, հարսանեկան թափորի գնալը դեպի եկեղեցի, աղջիկների գորգագործությամբ զբաղվելը: Հողվածում գեթ մեկ անգամ չի խոսվել ցեղասպանության մասին. ընդամենը տեղեկություն, որ հայերը հալածված են եղել տարածաշրջանի ժողովուրդների կողմից: Հողվածի առանցքում աշխարհին հայ կնոջ կերպարը ներկայացնելն էր, որը գուցե ունի իր օբյեկտիվ պատճառները:

Եզրակացություններ

Այսպիսով, ամփոփելով կարելի է եզրակացնել, որ Վուլֆի ստեղծագործություններն առհասարակ, ինչպես նաև «Միսիս Դելոուեյ» վեպը արտացոլում են տարածաժամանակային տիրույթի օբյեկտիվ իրականությունը գեղարվեստական գրականության պարադիգմայի միջով: Այդ ամենը ներկայացվում է հատկապես «գիտակցության հոսքի», գրական իմպրեսիոնիզմի առանցքով:

Ստեղծագործությունը մարդակենտրոն է, բացահայտվում են Քլարիսայի և Սեպթիմուսի հոգեբանական խառնվածքի առանձնահատկությունները: Անհատի հոգեկերտվածքի նախատիպի հենքի վրա կառուցվում է համամարդկային արժեհամակարգը, արտացոլվում աշխարհակարգի արատավոր լինելը և «վայրի» կապիտալիզմի «մարդախույս» բնույթը:

¹⁴ The National Geographic Magazine, Volume XXVIII, Number Four, Washington D.C., 1915 October. pp. 329–360.

ЛАРИСА ПОЛУБОЯРИНОВА

*Доктор филологических наук, профессор
заведующая кафедрой истории зарубежной литературы СПбГУ,*

ЛУИЗА ГАСПАРЯН

*кандидат филологических наук, научный сотрудник
Института литературы им. М. Абегамяна Национальной Академии
наук, докторант кафедры истории зарубежной
литературы СПбГУ*

ОТРАЖЕНИЕ ПОСТВОЕННОЙ ТРАВМЫ В РОМАНЕ В. ВУЛЬФ МИССИС ДЭЛЛОВЭЙ (С ОПОРОЙ НА АРМЯНСКИЙ ВОПРОС)

Резюме

Творчество Вирджинии Вульф представляет своеобразный мостик между социокультурной и литературной рецепции викторианской эпохи и периода модернизма, где писательница создает особое повествование на уровне «потока сознания» с опорой на доречевое ментальное сознание персонажа. Таким образом, Вульф выявляет процесс «потока сознания» (вербальное и невербальное) посредством языка, чтобы передать сложную, многогранную природу мышления и психологии человека в целом.

В статье предпринимается попытка проанализировать технику изображения «потока сознания» на материале романа В. Вульф «Миссис Дэлловэй». В работе «Миссис Дэлловэй» раскрывается историко-психологический пласт общества поствоенного периода через парадигму косвенного отражения армянского вопроса в повествовании романа.

Ключевые слова: Вирджиния Вульф, армянский вопрос, армяне, модернизм, послевоенная травма, поток сознания, британская пресса

LARISA POLUBOYARINOVA

Doctor of Philological Sciences, Professor
Head of the Chair of History of World Literature at
St. Petersburg State University

LUIZA GASPARYAN

Candidate of Sciences in Philology, Research Associate at
Institute of Literature named after M. Abeghyan
of the National Academy of Sciences
Doctorate at the Chair of History of World Literature at St. Petersburg
State University

THE REFLECTION OF POST-WAR TRAUMA IN VIRGINIA WOOLF'S NOVEL MRS. DALLOWAY (THROUGH INTERPRETATION OF THE ARMENIAN QUESTION)

Abstract

One cannot fail to observe that Virginia Woolf's creativity represents a kind of bridge between the socio-cultural and literary reception of Victorian epoch and the period of modernism, where the author depicts the technique of "stream of consciousness" on the basis of the pre-speech level in the character's mentality. In such a way, Woolf reveals the process of "stream of consciousness" (verbal and non-verbal) through language thus illustrating the complex, multifaceted nature of cognition and human psychology.

The article is an attempt to analyze the technique of "stream of consciousness" on the material of Virginia Woolf's novel "Mrs. Dalloway". Through the lines of the novel "Mrs. Dalloway" the historical-psychological layer of the post-war society is unfolded via the paradigm of indirect or even covert reflection of the Armenian Question.

Key words: *Virginia Woolf, Armenian Question, Armenians, modernism, post-war trauma, stream of consciousness, British press*